ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խոր-Վիրապ-Արենի-Նորավանք-Տաթև

Ծրագիրը նախատեսված է ինչպես մեծ, այնպես էլ փոքր խմբերի համար:

- **08:00** Հանդիպում հյուրանոցում, ուղևորություն դեպի Խոր Վիրապ վանական համալիր:

- **09:00-10:00** Էքսկուրսիա Խոր Վիրապ վանական համալիրում: Ամենայն Հայոց առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգոր Լուսավորիչը այստեղ 13 տարի բանտարկվեց քրիստոնեության քարոզչության համար՝ հայ հեթանոս թագավոր Տրդատ III- ի հրամանով:

- **10:00** Ուղևորություն գյուղ Արենի:

- **11:30** Էքսկուրսիա Արենի-1 քարանձավում: Վայոց Ձորի մարզում է գտնվում Հայաստանի ամենահայտնի քարանձավներից մեկը՝ Թռչունների քարանձավը (ավելի շատ հայտնի ինչպես Արենի քարանձավ): Քարանձավը գտնվում է Եղեգնաձորից 12 կմ հեռավորության վրա, Արենի գետի ձախ ափին:

  2008 թվականի սեպտեմբերին Թռչունների քարանձավում իրականացրած պեղումների արդյունքում հայտնաբերեցին աշխարհում ամենահին՝ ավելի քան 5500 տարեկան կաշվե կոշիկը: Այն հայտնաբերած հնագիտական թիմի ղեկավարը՝ Իռլանդիայի Քորք համալսարանի հնագետ Ռոն Փինհասին, համարում է, որ կոշիկի մեջ հայտնաբերված խոտը խցկել են, որպեսզի ոտնամանը պահպանի իր ձեւը:Ավելի ուշ, պեղումների ընթացքում այստեղ հայտնաբերվեցին էնեոլիթյան դարաշրջանի գինեգործության վկայություններ:

Կատարած հետազոտությունների արդյունքում գտել են չորացած խաղող, ամանեղեն, հագուստ, կանացի գանգեր և այլն: Թռչունների քարանձավը համարվում է աշխարհում գինու առաջին արտադրամասը:

- **12:30** Էքսկուրսիա Նորավանք վանական համալիր: Նորավանքը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Ամաղու գյուղից մոտ 3 կմ հյուսիս-արևելք: Նորավանքը կառուցվել է 13-14-րդ դդ: Վանական համալիրը «եզրագծված» է գեղատեսիլ վառ կարմիր գույնի ժայռերով:Հատկապես երեկոյան ժամերին՝ մայր մտնող արևի վերջին շողերի ներքո, բոսորագույն ժայռերն ու մարդակերտ գլուխգործոցը միահյուսվելով մեկ ամբողջություն են դառնում: Միջնադարում Նորավանքը կարևոր մշակութային և հոգևոր կենտրոն էր հանդիսանում: Նորավանքը Հայաստանի ամենաշատ այցելվող վայրերից մեկն է: 2002 թ-ին վանքը հիմնովին վերանորոգվել է:

- **13:30-14:30** Ճաշ Արենի գյուղի գաստրո-բակերում:

- **14:30** Մեկնում Տաթև գյուղ

- **17:00-18:00** Էքսկուրսիա Տաթևի վանական համալիրում:

- **18:00** Վերադարձ Երևան

Սննդի կետեր՝

- Ստեփանյանների գաստրո բակ
- Momik Wine Cube